ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-1/, առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-2/,առաջին կարգի մասնագետի /ծածկագրեր՝ 3.2-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար

Հայտատու՝ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-1)

Առաջատար մասնագետը օրենքով սահմանված կարգով ապահովում է հարկերի հավաքագրման աշխատանքների կատարումը այլ մարմիններից, վճարման փաստաթղթերի կազմումը , մասնակցում է ֆինանսատնտեսագիտական գործի կազմակերպմանը և ունի սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ Միջին մասնագիտական կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Տեղական տուրքերի մասին», «Գույքահարկի մասին», «Եկամտահարկի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2)

Առաջատար մասնագետը իրականացնում է քաղաքաշինության, բնապահպանման, հողօգտագործման վերաբերյալ գործառույթները և ունի սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ.

առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հողային օրենսգրքի» և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր

իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1)

Առաջին կարգի մասնագետը քարտուղարի հանձնարարությամբ՝
օրեքով սահմանված կարգով ապահովում է հարկերի հավաքագրման աշխատանքների կատարումը,այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է աշխատակազմի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
իրականացնում է հողի հարկի, գույքահարկի հավաքագրաման և մուտքագրման հետ կապված բոլոր ծրագրային գործառույթները, հաշվետվությունները, ծանուցումները
Առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝
առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2013 թվականի դեկտեմբերի 23-ին ժամը 11:00-ին Արաքսի գյուղապետարանում: Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք :
Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
• դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,
• տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
• արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
• մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
• անձնագրի պատճենը:
Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ Աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթին

ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2013 թվականի դեկտեմբերի 11-ը, մինչև ժամը 18.00-ը:
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Արաքս, Դրոյի փող. Թիվ 2 շենք: հեռ.՝ 098/33-04-66) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ-ի և ՀԳՄՀ վարչություն : Հասցեն ք,Արմավիր 71, հեռ, 2-76-49, 2-07-70: